

Եւ Բուղայի ելնելեն վերջ՝ դիւանապետը նաեւ իւր թղթերը կաշեայ պարկերու մէջ կը գետեղէր եւ կը պատրաստուէր իւր տիրոջ ետեւէն ելնելու երկրորդ օրը: Ինք իւլաթ քաղքէն դուրս պարտեզներու մէջ ամառանոց մը կը բնակէր, բնակարան իշխանագուն հայու, որ պատերազմի իրաւունք իրեն վիճակեցուցեր էր, ուստի դիւանապետը, որուն Միրզա Յասան անուն կ'ուտային, իւր բոլոր պատրաստութիւնքը տեսած առաջին քաղցր քունը կը քնէր, իմացաւ որ մէկը գինքը կը դրդէր զգուշութեամբ. կարծելով թէ ծառան գինք կարթնցնէ սկսաւ սաստել, որ հեռանայ եւ թողու հանգիստ քնել: Բայց տեսնելով, որ ազատում չի կայ, աչքերը բացաւ եւ զարմանքով նայեցաւ, որ ծառային տեղ միջահասակ, լայնալանջ, մեծագլուխ մարդ մը գլխուն վերելը կեցեր էր, որուն սեւ եւ փայլուն մազերը ուսը կը հասնէին, եւ երկու աչք ուներ սլաքի նման, եւ որուն ժպիտը հեգնութեան կերպարանք ուներ քան թէ ծիծաղի. այս օտար մարդը երբ գլխուն վրայ տեսաւ Միրզա Յասան, սոսկալով ձեռքը երկնցուց դէպի դաշոյնը, որ բարձին քովն էր, որպէսզի ինքզինք պաշտպանէ. իսկ մարդը առանց խօսելու ձեռքը նորա դաստակին վրայ գրաւ եւ այնպէս սղմեց, որ ոչ միայն ձեռքը կարկամեցաւ՝ այլ ցաւին չի դիմանալով սկսաւ աղաղակել: Իսկ անծանօթը իւր լայն ձեռքը բերնին վրայ դնելով կամաց եւ հանդարտ ձայնով

— Ամօթ է, Միրզա Յասան, քեզի այդպէս տղու նման կանչվոտել,— ըսաւ.— դու գրագետ եւ ուսումնական մարդ ես, ի՞նչ կ'ըսեն քու ծառաներդ, երբ պատմես թէ ձեռքդ փոքր մը սղմելուն չի դիմանալուն այդպէս ողորմուկ ձայն կը հանես:

Իսկ Միրզա Յասան տեսնելով թէ մարդն անուշ կերպով կը խօսի եւ իւր ծառաներուն խօսքը կընէ, որ դուրսն են, սկսաւ ձայնը բարձրացնել.

— Անհաւա՛տ շուն, որ աւագակ հայու մը կը նմանիս, չե՞ս վախեր որ ետքը ի՞նչ կը լինի քու վիճակդ, դու չե՞ս մտածեր թէ ես ո՞վ եմ, թէ իմ տէրս Բուղայ ի՞նչ մարդ է: